ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Մայիսի 21-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ սովետահայ անվանի բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի բացումը։ Նստաշրջանը կազմակերպել էին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան, Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գրողների միությունը։

Գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Եղիշե Չարենցը մեր խոշորագույն այն գրողներից է, ասաց նա, որի երկերում դրոշմվեցին XX դարի կարևորագույն իրադարձությունները՝ առաջին համաշխարհային պատերազմի և ազգային եղեռնի ողբերգական դեպքերից մինչև մեծ Հոկտեմբերը և նրա բախտորոշ դերը մարդկության պատմական ճակատագրում։ Եվ այսօր էլ, երբ մենք մոտենում ենք XX դարի ավարտին, մեծ բանաստեղծը մեզ հետ խոսում է իբրև ժամանակակից։ Չարենցը արտահայտում է մեր տագնապները մարդկության ներկայի և ապագայի համար. մեր հավատը, որ ի վերջո կհաղթանակեն բանականությունը և արդարությունը։

Ընդհանրապես դժվար է դատել այն մասին, շարունակեց Վ. Համբարձումյանը, թե ինչով է պայմանավորված եղել այս կամ այն ստեղծագործողի մեծ շնորհքը։ Էլ առավել դժվար է հասկանալ ինչից է ծնվում հանճարը։ Չարենցին սնել է մեր ժողովրդի անմար ոգին, ինչպես նաև ռուս ու համաշխարհային գեղարվեստական մշակույթը՝ Հոմերոսից ու Դանթեից մինչև Գյոթե, Պուշկին ու Թումանյան, որոնց ավանդույթները նա յուրացրեց ու վերադարձրեց աշխարհին՝ նոր փայլով ու շքեղությամբ։

Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործությունը եղել ու մնում են մեր գիտնականների ուշադրության կենտրոնում։ Բազմաթիվ հրատարակություններից պետք է հատկապես նշել գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի հրատարակած մեծ բանաստեղծի «Երկերի ժողովածուն» վեց հատորով և նրա անտիպ երկերի ստվար գիրքը։ Բազմաթիվ ուսումնասիրություններ են նվիրվել նաև Չարենցի ժառանգությանը, բայց այդ թեման ամենևին էլ սպառված չէ, և այդ ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան։

Չարենցի մահից անցել է կես դար, վերջում ասաց պրեզիդենտը, բայց նրա «անխարտակ ու մեծ ոգին» ապրում է մեր մեջ։ Եվ կապրի միշտ, քանի դեռ գոյություն ունեն նրան ծնած մայր ժողովուրդը, նրա լեզուն ու բազմադարյան գրականությունը։

Նստաշրջանի երեք նիստերում լսվեցին մի շարք ուշագրավ ու բովանդակալից զեկուցումներ, որոնք նորովի շոշափում էին Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղու հետ առնչվող բազմաբնույթ հարցեր։

Նստաշրջանի առաջին նիստում ելույթ ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր բանաստեղծ Վ. Գավրյանը։ Նա մասնավորապես խոսեց Եղիշե Չարենցի վերջին ստեղծագործությունների մասին։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Զաֆարյանի զեկուցումը նվիրված էր Եղիշե Չարենցի դրական առնչությունների պատմությանը, մասնավորապես Չարենց-Լևոն Շանթ գրական առնչություններին։ Չարենցի դստեր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Չարենցի. զեկուցման թեման էր «Չարենցի գրքերի հեղինակային օրինակները»։ «Բանաստեղծ-քաղաքացին վերջին շրջանի գործերում». այսպիսին էր բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Աճեմյանի զեկուցման թեման։

Գիտական նստաշրջանի Երկրորդ նիստը տեղի ունեցավ մայիսի 22-ին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանի զեկուցումը նվիրված էր Ե. Չարենցի պոեզիայում հայրենիքի ճակատագրի ըմբռնմանը։ «Երկիր Նաիրի» վեպի ժանրային բնույթին էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Բոզոյանի զեկուցումը։ «Ե. Չարենցը հայ գրականության լեզվի զարգացման երկու ուղղությունների մասին» թեմայով

զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Ռ. Իշխանյանը: Բանասիրական գիտությունների թեկնածու Ժ. Քալանթարյանի զեկուցման թեման էր «Ավանդականի և նորարարականի դիալեկտիկան «Գիրք ճանապարհիում»։

Գիտական նստաշրջանի երրորդ նիստը տեղի ունեցավ նույն օրը Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մասնաշենքում։ Բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Գասպարյանի զեկուցումը նվիրված էր 1930-ական թվականներին Ե. Չարենցի գեղագիտական որոնումներին։ «Ե. Չարենցը և սովետահայ պոեզիան» թեմայով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դաբրիելյանը: Գիտաշխատող Ա. Ալեքսանյանի զեկուցումը նվիրված էր Չարենցի «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքին։ Նիստում ելույթ ունեցավ ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր բանաստեղծ Գ. Էմինը:

Նստաշրջանի աշխատանքն ամփոփեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ. ակադեմիկոս Է. Չրբաշյանը: